

քանի ընծաների հետ միասին, ուղարկեց կաթողիկոսին :

Կայսրուհին հրովարտակով խոստանում էր յարգել կաթողիկոսի խնդիրը եւ յայտարարում էր . «Ըստ օրինակի նախնեաց՝ մեզ եւս հաճելի է մեր կայսերական գթութիւնն ու մարդասիրութիւնն ընծայել թէ՛ ներկայիս գերագնիւ Սիմէոն կաթողիկոսին եւ թէ՛ նրա հայրապետական աթոռի ապագայ յաջորդներին, ինչպէս նաեւ հայոց իւրաքաչիներին ու կառավարիչներին եւ բովանդակ ազնուաբարոյ հայ ազգին . . . Բացի այդ երաշխաւորում ենք յիշեալ Վեհազնեայ Սիմէոն կաթողիկոսին եւ ազնիւ իւզրաչիներին ու կառավարիչներին եւ ամբողջ ազնուաբարոյ հայ ազգին եւ մանաւանդ ոռուսաց կայսրութեան մէջ բնակուող հայերին մեր բարձրագոյն կայսերական շնորհն ու հովանաւորութիւնը» :

Հրովարտակի ոճը, լեզուն, ոգին, շոյող արտայայտութիւնները եւ մանաւանդ «ազնուաբարոյ» հայոց ազգին խոստացում «շնորհն ու հովանաւորութիւնը» միայն հերիք էին հայերի մէջ հին երազները կրկին վառելու եւ հայ քաղաքական մտածողութիւնը դէպի հիւսիս դարձնելու համար : Ինքը Սիմէոն կաթողիկոսը, անսահման երախտագիտութեամբ լցուած, յօրինում է եկեղեցական մի մաղթանք ոռուսաց կայսեր եւ կայսերական ամբողջ ընտանիքի համար, որը այնուհետեւ կատարում էր հայոց եկեղեցիներում բոլոր կայսերական տօներին :

Մաղթանքը կազմուած էր մի շարք սաղմոսներից, աղօթքներից, Աւետարանի եւ Գործք Առաքելոցի պատշաճ կտորներից, որի ամբողջ էութիւնը ամփոփուած է հետեւեալ մի քանի հատուածների մէջ .—

«Բարձրացո՛՛ Տէր եւ փայլեցո՛՛ դաւաւազան իշխանութեան սորա (այսինքն՝ կայսեր) ընդ ամենայն ծագս երկրի. ընդարձակեա՛՛ շտաւելիօք եւ հարազատ ժառանգակցօք մինչեւ ի կատարած աշխարհի : Այլ եւ օրհնեա եւ պահպանեա զամենեսեան, որք ընդ իշխանութեամբ դորին ենթադրին . . .

Զթագաւորութիւն սորա յաղթողս, զօրաւորս եւ անպարտելիս արասցես ի վերայ թագաւորութեանց : Զեոն քո ընկալցի եւ բազուկ քո զօրացուցէ զսա : Զթշնամիս սորա հալա-

ծականս արասցես եւ զյարուցեալսն ի վերա սորա ի ներքոյ ոտից սորա արկցես . . .

Անպակասելի եւ անթառամելի արասցես զթագաւորութիւն սորա յազգէ յազգ եւ յորդուոց յորդիս մինչեւ ի կատարած աշխարհի . . . Նոյնպէս եւ զսիրտ քոյսպսակ թագաւորիս մերոյ (այս անուն) քաղցր եւ դթած պահեսցես առ ամենայն ստորադրեցեալսն իւր եւ մանաւանդ առ ազգս հայոց» :

7.

Հայոց քաղաքական յարաբերութիւնները ոռուսաց կառավարութեան հետ աւելի սերտ եւ դործնական հողի վրայ են դրուած մանաւանդ այն ժամանակներից, երբ Յովսէփ արքեպիսկոպոս Արղութեանը նշանակուած է (1773 թ.) Ռուսաստանի հայոց Առաջնորդ : Արհին իր արտակարգ ընդունակութիւններով իր վրայ է դարձնում պալատի ուշադրութիւնը եւ դառնում է մի տեսակ պաշտօնական ներկայացուցիչը հայոց կաթողիկոսի ու ազգի եւ վարում է հայ ժողովրդի ազատագրութեան դատը ոռուսաց արքունիքում, Յովհաննէս Լազարեանի դործօն մասնակցութեամբ եւ խորհուրդներով :

Արղութեանի մօտիկ բարեկամն էր Գրիգորիյ Ալ. Պօտիօմկինը, որը ժամանակին հըսկայական ազդեցութիւն ունէր Ռուսաստանում, կարելի է ասել՝ ամենազօրեղ պետական մարդն էր — շնորհիւ իր մտերիմ յարաբերութեան Եկատերինայի հետ : Նա մի փառասէր եւ իշխանատենչ անձնաւորութիւն էր : Նրան վերագրում են մի շարք շահեկան ծրագիրներ — յաճախ անիրականալի, օղային ծրագիրներ : Նա երազում էր ստեղծել մի շարք անկախ պետութիւններ Ռուսաստանի գերագոյն հովանաւորութեան ներքոյ :

Այդ ծրագիրներից մեզ համար հետաքրքրական են յատկապէս երկուսը — յունականը եւ հայկականը :

Դաւանակից յոյների ազատագրումը օսմանեան լծից Ռուսաստանի համար դարձաւ մի նուիրական միտք այն օրից, երբ Մահմէդ Բ. սուլթանը տիրեց Կ. Պոլսին եւ Այա Սոֆիան վերածուեց մզկիթի : Սակայն ոռուսները լուծ էին, որովհետեւ Տաճկաստանը դեռ զօրեղ էր :

Ռուսաց վեհապետներից առաջինը Պետրոս Մեծն եղաւ, որ քիչ-չատ շօշափելի արտայայ-